ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԱՂՎԱՆՔ ՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

ՀԵՆՐԻԿ ՍՎԱՋՅԱՆ

Ծագելով մ. թ. I դ., քրիստոնեությունն արագորեն տարածում է գտնում Մերձավոր Արևելքի երկրներում: Սկզբնական շրջանում այն տարբեր երկրներ իր համար ճանապարհ էր հարթում ողջ Մերձավոր Արևելքի քրիստոնեական կենտրոն Երուսաղեմից[1]: Բացառություն չկազմեց նաև Աղվանքը: Ինչպես վկայում է Մ. Կաղանկատվացին, Աղվանքի առաջին քարոզիչ սբ. Եղիշան մեզ հետաքրքրող երկիր է հասնում նույնպես դուրս գալով Երուսաղեմից և անցնելով Պարսկաստան-Ատրպատական-Մտսքթաց երկիր-Աղվանքը՝ շարունակում իր ճանապարհը դեպի Հայոց հյուսիսարևելյան կողմեր[2]: Մեկ անդամ ցույց տալով սբ. Եղիշայի ելման կետը, Մ. Կաղանկատվացին դա կրկնում է նաև այլուր, մի դեպքում գրելով, թե «բնական լուսաւորութեան երկրիս արևելեայցս ի ձեռն սրբոյն Եղիշայի յԵրուսաղեմէ եղեալ սկիզբն»[3], մի ուրիշ դեպքում շեշտելով, որ Աղվանքի լուսավորությունը եղավ այն սբ. Եղիշայի կողմից, «որ եկն յԵրուսաղեմէ»[4]:

Աղվանքում սբ. Եղիշայի հայտնվելու և քարոզչական գործունեություն ծավալելու հետ է անմիջականորեն կապված այնտեղ քրիստոնեության ներթափանցման ժամանակաշրջանի հարցը: Ուստի որպես հարցի պարզաբանման ելակետային պայման, ուղղակի անհրաժեշտություն է դառնում սբ. Եղիշայի Աղվանքում հայտնվելու և գործելու ժամանակաշրջանի որոշումը, մանավանդ որ պատմական այս իրադարձության ժամանակաշրջանի մասին ուսումնասիրողները համակարծիք չեն:

Ք. Պատկանյանը որպես սբ. Եղիշայի մահվան տարեթիվ նշում է մ.թ. 53թ.[5]: Հովհ. Շահխաթունյանը՝ 79 թ.[6], ասել է թե՝ սրբի գործունեութ-

---

1 Ասորիքն իր Անտիոք մայրաքաղաքով, իսկ Օսրոյենն էլ Եդեսիա կենտրոնով, որտեղից քրիստոնեության տարածման համար Մեծ Հայք եկավ սբ. Թադեոսը, լինելով առաքելական գործունեության կենտրոններ, պարզապես միջանկյալ երկրներ էին քրիստոնեության՝ Երուսաղեմից Հայաստան ներթափանցելու ճանապարհին:

2 Մ ո վ ս ե ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. Պատմութիւն Աղուանից աշխարհի (այսուհետև՝ Կաղանկատվացի). Երևան, 1983, էջ 10: Հ. Ս վ ա զ յ ա ն. Սուրբ Եղիշան Հայոց Արևելից կողմանց, Ջողա երկրի և Աղվանից աշխարհի լուսավորիչ. — «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ «Լրաբեր»), 2000, №2, էջ 55–65:

3 Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ե, էջ 97–98:

4 Նույն տեղում, էջ 350: Տե՛ս նաև Ղ. Ա լ ի շ ա ն. Հայապատում. Վենետիկ, 1901, էջ 384:

5 История агван Моисея Каганкатваци, писателя X века. Перевод с армянского, СПб., 1860, с. 280.

6 «Սուրբ Եղիշայ . . . կատարեցավ նահատակութեամբ յամի 79» (տե՛ս Հ ո վ հ. Շ ա հ խ ա թ ո ւ ն յ ա ն ց. Ստորագրություն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ. հ. Բ, Էջմիածին, 1842, էջ 33:

յան ժամանակաշրջանը նրանք որոշում են մ.թ. I դ.: Սբ. Եղիշային I դ. քարոզիչ է համարում նաև Մ. Բարխուտարյանցը: Նա գրում է. «(Եղիշան – Հ. Ս.) Փրկչական 70 թվին Պարսկաստանի կողմից մտնում է Աղուանից երկիրն և իւր քարոզութիւնը սկսում »[7]: Կան ուսումնասիրողներ էլ, որոնք թեպետև չեն նշում սբ. Եղիշայի գործունեության որևէ որոշակի ժամանակաշրջան, սակայն Աղվանից եկեղեցու հիմնադրումը համարելով 74թ., դրանով իսկ նրան դարձնում են I դ. գործիչ[8], քանի որ նա էր այդ եկեղեցու հիմնադիրը: Ի տարբերություն նշված հեղինակների, որպես Աղվանքում սբ. Եղիշայի գործունեության ժամանակաշրջան, ագրբեջանցի ուսումնասիրողներից Ռ. Գեյուշևը մատնանշում է II դարը[9]: Ֆ. Մամեդովան սր. Եղիշային համարում է Աղվանքում քրիստոնեության տարածողներից մեկը, սակայն քրիստոնեության սույն երկիր ներթափանցումը և համայնքների հիմնադրումը կապում է սբ. առաքյալներ Թադեոսի և Բարդուղիմեոսի անունների հետ[10]: Իր այս կարծիքը հիմնավորելու համար նա վկայակոչում է Մ. Կաղանկատվացուն, որը Թադեոսի մասին ասում է, թե «մերոցս արևելեայցս վիճակեցաւ սուրբ առաքեալն Թադէոս»[11], «Արևելք» «արևելեայցս» անվան տակ պարտադրելով անվերապահորեն հասկանալ միմիայն Աղվանից աշխարհը և Ստ. Օրբելյանին, որը պատմում է թե Սյունիքում քարոզչական աշխատանքներ է կատարել սբ. Բարդուղիմեոսը[12], այս դեպքում էլ Սյունիքը ներկայացնելով որպես Աղվանքի մարզերից մեկը[13]:

Սակայն, ինչպես բազմիցս ասվել է, «Արևելք» աշխարհագրական անվան տակ Մ. Կաղանկատվացին միշտ նկատի է ունեցել Հայոց հյուսիսարևելյան կողմերը կամ Ուտիք-Արցախյան աշխարհը, իսկ Սյունիքն էլ

---

7 Մ. Բարխուտարեանց. Պատմութիւն Աղուանից. Հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 51:

8 К. Гандзакеци. История (пер. Т. Тер-Григоряна). Баку, 1846, с. 266, прим. 650. Տե՛ս Б. Геюшев. Христианство в Кавказской Албании. Баку, 1984, с. 26.

9 Р. Б. Геюшев. Նշվ. աշխ.:

10 Ф. Мамедова. Политическая история и историческая география Кавказской Албании. Баку, с. 217, 223.

11 Կաղանկատվացի, էջ 10:

12 «Ի բառնալն Բարդուղիմէոսի ի Պարսից անցեալ ընդ Ատրպատականի՝ գայ իւրովք աշակերտօքն և անցեալ ընդ գետն Երասխ՝ մտանէ ի սահմանս Սիսականու, և սկիզբն արարեալ քարոզութեան յՈրգվատ գեօղ և յԱրևիս գաւառ և ի տունն Բազաց և Գողթն» (տե՛ս Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 21):

13 Ֆ. Мамедова. Նշվ. աշխ., էջ 223-224: Ավելի հեռուն գնալով, Ֆ. Մամեդովան Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Արաղ-Շավարշական գավառը (որտեղ գործել և նահատակվել է Թադեոս առաքյալը) գիտում է որպես Ատրպատականի գավառներից մեկը և այստեղ հիմնադրված եկեղեցին նկատի ունենալով, հայտարարում է, թե Ատրպատականում նույնպես կա առաքելական ծագմամբ ինքնուրույն եկեղեցի: Բայց խիստ կամայական է ինչպես Արտազը Ատրպատականում տեղադրելը (և դրանով վերջինիս քրիստոնեական երկրների շարքում դասելը), այնպես էլ Սյունիքը օտարելը Հայաստանից և դրանց եկեղեցիները ինքնուրույն, առանձին, առաքելական ծագմամբ եկեղեցիներ դիտելը: Անտարակուսելի է, իհարկե, որ Արտազի ու Սյունիքի եկեղեցիներն ունեին առաքելական ծագում, բայց դա ոչ թե այն հիմամբ, որ բերում է Ֆ. Մամեդովան, չմտահոգվելով դիտական լրջության պակասի մասին, այլ այնքանով, որքանով, որ դրանք միևնույն՝ Հայաստան երկրի քույր եկեղեցիներ լինելով, չէին կարող այլ ծագում ունենալ, քան ուներ մայր՝ հայոց եկեղեցին:

երբեք չի կազմել իր հետ ընդհանուր սահման չունեցող այդ աշխարհի մասը[14]: Տուրք տալով Աղվանքի աշխարհագրական տարածքի անհարկի ընդարձակմանն ուղղված ադրբեջանցի ուսումնասիրողների սևեռուն մտայնությանը, Մամեդովան սխալվում է թե՛ մեկ և թե՛ մյուս հարցում: Մինչդեռ խնդրին սթափ մոտեցմամբ ու աղբյուրների տվյալների անկանխակալ քննությամբ, հստակորեն ուրվագծվում են բուն երկրի սահմանները և միանգամայն պարզսրոշ երևում է, որ սբ. Եղիշան էր այն սուրբը, որն առաջինն էր հայտնվել այդ սահմաններում և նոր կրոնի տարածման գործի սկիզբը դրել:

Սբ. Եղիշայի գործունեության մեջ առանձնանում է երկու շրջան: Առաջինում նա՝ սբ. Թադեոսի աշակերտը, նրա հետ համատեղ աշխատանքներ է տանում Հայաստանում, իսկ երկրորդում, իր ուսուցչի մահից հետո, գործում է ինքնուրույն: Հենց այս շրջանում էլ քարոզչական աշխատանքներ տանելու համար գալով Հայոց հյուսիսարևելյան կողմեր, մտնում է Աղվանք (ու Զողա երկիր)[15] և որպես քարոզիչ-աւաքյալ՝ ավետարանչական լույսով լուսավորում այն:

Եկեղեցական ավանդությունը սբ. Թադեոսի մահվան տարի է համարում մ.թ. 43թ. (Հայաստանում գործունեության ժամանակաշրջանը՝ 35-43 թթ.)[16]: Եվ քանի որ սբ. Եղիշան իր ինքնուրույն գործունեությունը սկսել է նրա մահից հետո, կարծիք է կազմվել, թե նա I դ. երկրորդ կեսի գործիչ է: Հապճեպ կազմված այս կարծիքը, սակայն, անմիջապես բացառվում է, երբ քննության ենք առնում վարքագրական ու պատմական աղբյուրներից հայտնի տվյալներն այն մասին, թե սբ. Թադեոսին (և սբ. Բարդուղիմեոսին) նահատակության է մատնել Հայոց թագավոր Սանատրուկը, պատմական մի անձնավորություն, որին հիշատակում են ինչպես հայ, այնպես էլ օտարազգի մատենագիրները, ընդ որում մեծ գովեստով[17]: Ավելորդ չի լինի նշել նաև, որ նրան վերաբերող հիշատակությունները գնահատվել են որպես «պատմական ու արժանահավատ»[18], այսինքն հավաստ-

---

14 Այս հարցերի շուրջ հանգամանորեն տե՛ս Ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը. Երևան, 1966: Բ. Ս. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. Դրվագներ հայոց արևելից կողմանց պատմության. Երևան, 1981: Հ. Ս. Ս վ ա զ յ ա ն. «Աղվանից աշխարհ» հասկացությունը ըստ Մովսես Կաղանկատվացու.– «Բանբեր Հայաստանի արխիվների», 1973, №1, էջ 225–234, ն ո ւ յ ն ի՝ Об одной ,, Албанской,, надписи.– «Լրաբեր», 1987, №2, էջ 44, ն ո ւ յ ն ի՝ Пример использования исторической науки в экспансивных целях.– «Բանբեր Երևանի համալսարանի», 1989, №2, էջ 54:

15 Հ. Ս. Ս վ ա զ յ ա ն. Սուրբ Եղիշան..., էջ 55-56:

16 Մ ա ղ ա ք ի ա ա ր ք ե պ ի ս կ ո պ ո ս Օ ր մ ա ն յ ա ն. Հայոց եկեղեցին. Երևան, 1993, էջ 24: Նույն ավանդությունը Հայաստանում քարոզչություն ծավալած և գարձյալ Սանատրուկ արքայի հրամանով նահատակված մյուս առաքյալի՝ սբ. Բարդուղիմեոսի համար ցույց է տալիս 44–60թթ. (տե՛ս նույն տեղում): Որպես սրբերի գործունեության ժամանակաշրջան, փոքր տարբերություններով առաջարկվել են նաև այլ տարբերվեր, որոնք, սակայն , էական չեն մեր խնդրի քննարկման համար:

17 S u i d a s. Lexicon (Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Երկեր. հ. Բ, Երևան, 1978, էջ 19): Հ ո վ ս ե պ ո ս Փ լ ա վ ի ո ս. Դիոն Կասսիոս, թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթ. Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 212: Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց. Երևան, 1987, էջ 12, 180, 222: Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի. Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Խորենացի). Երևան, 1991, էջ157, 159: Պատմություն Սեբէոսի. Երևան, 1979, էջ 47, 55:

18 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 22:

վել է նրա պատմականությունը: Իսկ պատմագիտությունն էլ, որպես այս պատմական անձի թագավորության տարիներ, ընդունել է 88–109–110թթ.[19]: Եվ ահա, Սանատրուկի թագավորության նշված տարիների համադրումը սրբերի նահատակության տարեթվերի (համապատասխանաբար 43թ. և 60թ.) հետ, առաջ է բերում մի այնպիսի անհամապատասխանություն, որն ուղղակի անտրամաբանական է դարձնում իրադարձությունների բնականոն ընթացքը: Ստացվում է այնպես, թե սրբերը քարոզչական աշխատանք են կատարել և նահատակվել այն ժամանակ, երբ Սանատրուկը դեռ թագավոր էլ չէր, հետևաբար և չէր էլ կարող սպանել նրանց: Մինչդեռ դա հնարավոր էր միայն նրա գահ բարձրանալուց (88թ.) հետո և այն էլ զգալի ժամանակ անց: Վերջին ենթադրությունն ունի նաև իր մատենագիտական հիմքը: Մ. Խորենացին, Հովհ. Դրասխանակերտցին և Մխիթար Անեցին հավաստիացնում են, որ հայոց թագավորը սբ. Թադեոսի քարոզչությամբ սկզբում ընդունել է քրիստոնեությունը և ապա, որոշ ժամանակ անց, նախարարների երկյուղից թողել այն և նոր միայն սպանել սրբին[20]: Այս մասին ավելի պարզ է արտահայտվում Հովհ. Դրասխանակերտցին. «(Սանատրուկը – Հ. Ս.), որ թէպէտև ի սկզբանէ քարոզութեանն Թադէոսի առաքելոյ հաւատաց ի Քրիստոս, դարձեալ ուրանայ՝ և յետ փոքր ինչ ապա բազում չարչարանօք և սրով կատարեալ զսուրբն Առաքեալն ընդ նմին և զդուստր իւր զՍանդուխտ՝ վճարէ ի կենացս»[21] (ընդգծ. – Հ. Ս.): Հովհ. Դրասխանակերտցու այս հաղորդման մեջ մեր խնդրի համար առանձնակի կարևորություն է ներկայացնում ընդգծված «յետ փոքր ինչ ապա» (և մի փոքր ուշ) կապակցությունը, որից պարզորոշ երևում է, որ Սանատրուկի դավանափոխ լինելուց մինչև սրբի նահատակությունը որոշակի ժամանակամիջոց է անցել: Թադեոսի կողմից Սանատրուկ արքային, նրա դստեր՝ Սանդուխտին ու շատերին, այդ թվում և բաղում նախարարների, դարձի բերելու[22] և ընդհանրապես, հայոց մեջ առաքյալի բավականաչափ երկարատև ժամանակ ընդդրկող գործունեության մասին նշում են նաև ուրիշ հեղինակներ[23]: Այս ամենից բացի նաև տրամաբանական է կարծել, որ Թադեոսն իր քարոզչության հենց սկզբից չէր, որ Սանատրուկին հակել էր քրիստոնեության: Դրա համար նույնպես ժամանակ էր պահանջվել, որով, անշուշտ, երկարաձգվել էր առաքյալի գործունեությունը Արտազ-Շավարշավանում: Այսպիսով, վկայակոչված հաղորդումները և տրամաբանական

---

19 Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, Երևան, 1971, էջ 766–767, 776: Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա. հ. 1, Երևան, 1981, էջ 104, 394, 851:

20 Խ ո ր ե ն ա ց ի, էջ 157: Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Դրասխանակերտցի). Երևան, 1996, էջ 38: Մ խ ի թ ա ր Ա ն ե ց ի. Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց. Երևան, 1983, էջ 86:

21 Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 38:

22 Սանատրուկի շրջապատից քրիստոնեություն ընդունողների թվում Մ. Զամչյանցը նշում է նաև թագավորի քրոջը «զկոչեցեալն Թագուհի», որը նույնպես սպանվում է եղբոր կողմից (տե՛ս Մ. Զ ա մ չ յ ա ն ց. Հայոց պատմություն սկզբից մինչև 1784թ., հ. Ա, Երևան, 1985, էջ 298):

23 Նույն տեղում, էջ 291, 295–296: Սոփերք Հայկական, Թադեոս և Սանդուխտ. դիրք Ը, Վենետիկ, 1853, էջ 9-58: Մ. Ա վ ա գ յ ա ն. Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց. հ. 4, Վենետիկ, 1813, էջ 17-19: Քրիստոնեական ավանդությունը Հայաստանում Թադեոսի գործունեության տարեթվեր համարելով 35-43թթ., նրան, ընդհանուր առմամբ, վերագրում է ութ տարվա քարոզչական աշխատանք մեր երկրում:

վերլուծությունը լիակատար հիմք են տալիս կարծելու, որ ճիշտ չեն սրբերի սպանության տարեթվերը[24]: Ուստի, հիմք ընդունելով Սանատրուկի գահ բարձրանալու և սրբերի սպանության միջև ընկած ժամանակամիջոցը, գտնում ենք արդարացի և հիմնավորված վերջիններիս վախճանի ժամանակաշրջան ընդունել դարավերջը կամ նույնիսկ հաջորդ դարի սկիզբը: Ժամանակագրական այս ուղղումից հետո միանգամայն ակներև է դառնում, որ սբ. Եղիշան չէր կարող ավելի վաղ ժամանակներում լինել Աղվանքում, քան առաջարկվող ժամանակներն էին, քանի որ, ինչպես գիտենք, նա Թադեոսի վախճանից հետո իր ինքնուրույն գործունեության շրջանում էր միայն հայտնվել Աղվանքում, այն էլ ոչ անմիջապես: Ուսուցչի սպանությունից հետո նա վերադարձել է Երուսաղեմ, այստեղ ձեռնադրվել եպիսկոպոս և նոր միայն ուղարկվել քարոզչական աշխատանքի և երկար ճանապարհ կտրելով մտել Աղվանք ու Հայոց Արևելից կողմեր[25]: Իսկ այս ողջ երկարաձիգ իրադարձություններն ենթադրում են բավական երկար ժամանակամիջոց, որն էլ, իր հերթին, ավելի քան հավանական է դարձնում կատարված ժամանակագրական տեղաշարժը: Այսպիսով, հանրագումարի բերելով վերը շարադրվածը, կարելի է միանգամայն համոզված պնդել, որ սբ. Եղիշան իր առաքելական գործունեությունը ծավալել է ոչ շուտ, քան մ.թ. II դարի սկզբներին: Եվ որովհետև նա էր այն առաջին ավետարանիչը, որ եկել էր Աստծո խոսքը քարոզելու, ուստի կասկած չի կարող լինել, որ քրիստոնեությունն մուտք է գործել Աղվանք սբ. Եղիշայի գործունեությամբ պայմանավորված մ.թ. II դ. արշալույսին: Սբ. Եղիշայի գործունեության այս շրջանն էլ կազմում է քրիստոնեության Աղվանք ներթափանցման առաջին փուլը:

Սբ. Եղիշան լինելով առաջին քարոզիչը երկրում, նոր վարդապետության տարածման նպատակով, բնականաբար, համայնքներ էր հիմնադրելու, աշակերտներ էր պահելու և ուսուցանելու: Ուրեմն, այս հարցում ևս նա առաջինն էր և դարձյալ սխալվում են ադրբեջանցի հեղինակները Աղվանքում համայնքների հիմնադիրներ համարելով սբ. Թադեոսին և սբ. Բարդուղիմեոսին[26], որոնք նույնիսկ այդ կողմերում չեն եղել: Կան տեղեկություններ, մասնավորապես սբ. Թադեոսի մասին, որ նա քարոզիչներ է ուղարկել հայոց հյուսիսարևելյան մարզեր[27], բայց չկա որևէ ակնարկ նրա

---

24 Դրանք հավատ չեն ներշնչել նաև Մ. Օրմանյանին, որը, խուսափելով անպտուղ բանավեճերից, հետազոտության նյութ չի դարձրել դրանք: Նա գրում է. «Բայց մեք ավելորդ կնկատենք թվականներու և տեղերու մանրամասն հետազոտությանց մտնել, որոնք հաճախ անլուծելի վիճաբանություններու տեղի կուտան» (Մ. Օ ր մ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 24–25):

25 Հ. Ս վ ա զ յ ա ն. Սուրբ Եղիշան..., էջ 55–65:

26 Ф. М а м е д о в а. Նշվ. աշխ., էջ 217, 223:

27 Վանական վարդապետը գրում է. «Դադիու, մի յեօթանասնիցն, որ գնաց հրամանաւ Թադեոսի ի Մեծն Հայք և ի կողմանս հիւսիսոյ. . . և դարձեալ եմուտ ի փոքր Սիւնիս» (Ղ. Ա լ ի շ ա ն. Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 47): Նույն միտքը տե՛ս նաև Ժամանակագրութիւն տեառն Միքայելի ասորւոց պատրիարքի. Յերուսաղէմ, 1870, էջ 600: Ուշագրության է արժանի այն, որ Ղ. Ալիշանը, բերելով Վանական վարդապետի սույն միտքը, «ի փոքր Սիւնիս» բառակապակցությունը ծանոթագրում է «որ և Աղուանք Հայոց» (տե՛ս Ղ. Ա լ ի շ ա ն. Հայապատում, էջ 47, ծան. 5):

նշված վայրերում, առավել ևս բուն Աղվանքում անձամբ լինելու մասին[28]: Դա այդպես ներկայացնում է Ֆ. Մամեդովան, որը, իր ցանկալի երկրում նրանց գործունեության որևէ տեղավայր ցույց տվող տվյալներ չգտնելով աղբյուրներում (չէր էլ կարող գտնել, որովհետև այդպիսիք չկան), հրամցնում է հաղորդումներ, որոնցում որպես սրբերի գործունեության վայրեր հիշատակված մարզերը (ինչպես, օրինակ, Սյունիքը) վարչականորեն ոչ մի կապ չեն ունեցել Կուրից հյուսիս ընկած բուն Աղվանքի հետ:

Քրիստոնեական առաջին համայնքները, զարգացման տարբեր մակարդակ ունեցող տնտեսական շրջանների բաժանված Աղվանքում, կարող էին հիմնադրվել երկրի համեմատաբար բարգավաճ շրջաններում, ուր, բացի տնտեսական նախադրյալներից, գոյություն ուներ նաև սոցիալական հիմք. հասարակության շերտավորվածությունը հարուստների ու աղքատների, դրա անընդհատ խորացումը, առօրյա հոգսերից վերանալու ձգտումը և դրան նպաստող այնպիսի հոգևոր գործոնի անհրաժեշտությունը, ինչպիսին էր քրիստոնեությունն իր սկզբնական շրջանում, որպես աղքատների ու զրկվածների կրոն և այլն: Աղվանքում այդպիսի համեմատաբար զարգացած շրջան էր Ավթարանի բերրի հովիտը, որտեղ էլ գտնվում էր երկրի մայրաքաղաք Կապաղակը: Այստեղ, ինչպես նաև այլ խոշոր բնակավայրերում (որոնք առևտրի ու արհեստագործության կենտրոններ էին) համայնքների ստեղծման ու քրիստոնեության տարածման համար առավել պարարտ հող կար, քան մյուս բնակատեղիներում: Եվ շատ հավանական է, որ առաջին համայնքները հիմնված լինեին քաղաքներում: Դա է ցույց տալիս Եղիշայի գործունեության աշխարհագրական ոլորտը՝ Զողը, դեպի Ուտիք տանող հավանական ճանապարհին ընկած Կապաղակ քաղաքը՝ բուն Աղվանքում և Սուհառ ու Գիս քաղաքները Ուտիքում և այլն[29]:

Հետևելով Եղիշայի գործունեությանը, պարզվում է, որ նա Աղվանքում հանդես է եկել ոչ միայն որպես լուսավորիչ, այլև համայքների հիմնադիր, առաքյալ, որը գցել է նոր հավատի խարիսխները: Ի դեպ, Վանական վարդապետը նրան ներկայացնում է հենց որպես 72 առաքյալներից մեկը. «Եվ Եղիշէ և Խադայ Բ յեւթանասից են»[30]: Մ. Դասխուրանցին էլ շեշտում է, որ առաքելական հավատը սբ. Եղիշայից է սկզբնավորել[31]: Իկուր չէ նաև, որ նրան նվիրված սրբավայրերը, մասնավորապես, Թարթառի (Տրտուի) կիրճում գտնվող Ներսմիհրի (Զրվշտիկ) վանքը, ուր թաղվել էին նրա նշխարները[32], կոչվել է «Եղիշե առաքյալի» վանք: Ուստի սխալված չենք լինի,

---

28 Մ. Զամչյանցի կարծիքով, Թադեոսը եղել է Հայոց Աղվանքում (Մ. Զ ա մ չ յ ա ն ց. Նշվ. աշխ., հ. Ա, էջ 291), սակայն գտնում ենք, որ նման կարծիքը հաստատուն չէ և ճշգրտման կարիք ունի:

29 Ըստ Մ. Բարխուտարյանցի՝ Եղիշան, քարոզելով ու աշակերտներ ուսուցանելով, անցել է Ճղբաց, Լփնաց, Բաքվի ու Շամախու գավառներով (Մ. Բ ա ր խ ո ւ տ ա ր ե ա ն ց. Պատմութիւն Աղուանից. հ. Ա, էջ 51):

30 Ղ. Ա լ ի շ ա ն. Հայապատում, էջ 47: Նաև Գիրք թղթոց. Թիֆլիս, 1901, էջ 536:

31 Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 300:

32 Նույն տեղում, էջ 12:

եթե հանձինս սբ. Եղիշայի, Աղվանից եկեղեցին համարենք առաքելական ուղղակի ծագմամբ[33]:

Ըստ Ֆ. Մամեդովայի, քրիստոնեության Աղվանք ներթափանցման առաջին շրջանում նոր կրոնն այստեղ ավելի հաջողությամբ է ընդունվում, քան Մեծ Հայքում (ու Վիրքում): Որպես իր ասածի ապացույց, նա վկայակոչում է Կաղանկատվացու աշխատության այն գլուխները, որոնցում խոսվում է սբ. Եղիշայի կողմից քրիստոնեության տարածման մասին (գիրք Ա, գլ. Զ, Է, Թ, գիրք Բ, գլ. ԽԸ)[34]: Բայց Մ. Կաղանկատվացու աշխատության նրա վկայակոչված գլուխները բոլորովին էլ այն փրկարար օղակները չեն, որոնցից կառչում է նա իր վերոհիշյալ միտքը հաստատելու համար: Դրանցում կան ցուցումներ, որոնցից ճիշտ հակառակն է երևում: Աղվանքում ևս (ինչպես և ամենուրեք) քրիստոնեությունն իր համար ճանապարհ էր հարթում հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ: Այդ գլուխներում է, որ Կաղանկատվացին պատմում է, թե ինչպես սբ. Եղիշային ու նրա երեք աշակերտներին հետապնդել են վերջիններիս հարազատները, մեկին նահատակել, իսկ մյուս երկուսին իրենց հետ տարել, ինչպես է սբ. Եղիշան չարչարանքներ կրել, տանջամահ արվել ու գցվել մի փոսի մեջ և այլն[35]: Սրանք փաստեր են, որոնք չի կարելի շրջանցել, առավել ևս ներկայացնել իրենց բովանդակությանը հակառակ իմաստով:

Եղիշայի գործունեությամբ և նահատակությամբ ավարտվում է քրիստոնեության Աղվանք ներթափանցման առաջին փուլը: Նրան ու նրա գործունեությանը նվիրված նշված հաղորդումներից հետո, մի բավական երկար ժամանակամիջոց, աղբյուրները ոչինչ չեն հաղորդում այս երկրում քրիստոնեության տարածման կամ որևէ ձևով դրսևորման մասին: Այդպիսիք աղբյուրներում ի հայտ են գալիս միայն IV դ. սկզբներին պայմնավորված Հայաստանում Գրիգոր Լուսավորչի և հայոց թագավոր Տրդատ III գործունեությամբ:

301թ. Հայաստանում քրիստոնեությունը պետական պաշտոնական կրոն հռչակելուց հետո, հայոց թագավորն ու առաջին կաթողիկոսը եռանդուն գործունեություն են ծավալում նոր հավատը ժողովրդի մեջ տարածելու և ամրապնդելու ուղղությամբ: «Եվ այսպէս,– գրում է Ագաթանգեղոսը,– ընդ ամենայն երկիրն Հայոց, ի ծագաց մինչև ի ծագս, ձգտէր տարածանէր զմշակութիւն քարոզութեանն և աւետարանութեանն. ի Սատա-

---

33 Մ. Օրմանյանը նշում է թե «եկեղեցիների առաքելական ծագումը երկու տեսակ է: Մեկը ուղղակի ծագում է երբոր եկեղեցին անմիջապես առաքյալի մը անձնական քարոզությամբ սկսած է, մյուսը անուղղակի է, երբոր ծագումը յառաջ եկած է առաքյալներե հաստատված եկեղեցվոյ մը միջնորդությամբ» (Մ. Օ ր մ ա ն յ ա ն. Հայոց եկեղեցին, էջ 24): Նույն միտքը նա արտահայտել է նաև իր մի ուրիշ աշխատությունում (Ազդապատում. հ. Ա, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 19)· Սբ. Եղիշան Աղվանքում հանդես եկավ հենց որպես առաքյալ և որպես այդպիսին էլ անձնական քարոզչությամբ ծնունդ տվեց Աղվանից եկեղեցուն, որի համար էլ վերջինս, իրավամբ, կարող է դասվել առաքելական եկեղեցիների շարքում:

34 Ֆ. Մ ա մ ե դ ո վ ա. Նշվ. աշխ., էջ 225:

35 Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի. գիրք Ա, էջ 10-11: Իսկ Բ գրքի ԽԸ գլուխը (էջ 271–276) պատմում է հույն-հայկական դավանաբանական վեճերին և Աղվանքի եկեղեցու նկատմամբ Հայոց եկեղեցու ունեցած դերադասության, Սյունիքի՝ Հայաստանից անջատվելու և այլ համանման հարցերի մասին: Ինչպես տեսնում ենք, այս գլուխը ևս չի պարունակում այնպիսի նյութ, որ հաստատի Ֆ. Մամեդովայի ինքնահնար կարծիքը:

զացւոց քաղաքէն մինչև առ աշխարհաւն Խաղտեաց, մինչև առ Կաղարջօք, մինչ ի սպառ ի սահմանս Մասքթաց, մինչև ի դրունս Ալանաց, մինչև ի սահմանս Կասպից, ի Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց. և յԱմդացւոց քաղաքէն մինչև առ Մծբին քաղաքաւ, քերէր, առ, սահմանօքն Ասորւոց առ նոր Շիրական երկրաւն, և առ Կորդուօք մինչև յամուր աշխարհն Մարաց, մինչև առ տամբն Մահքր-Տան իշխանին, մինչև յԱտրպատական ձգտէր տարածանէր զաւետարանութիւնն իւր»[36]:

Բացի Հայոց աշխարհում հաջողությամբ տարվող այս աշխատանքից, նրանք զուգահեռաբար լուրջ գործունեություն են ծավալում քրիստոնեությունը նաև հարևան երկրներում՝ Աղվանքում, Վիրքում և նրանց շուրջ գտնվող աշխարհներում ու իշխանություններում տարածելու համար: Դա վկայում է Մ. Ասորին հետևյալ հաղորդմամբ. «Եվ ելից (Գրիգոր Լուսավորիչը – Հ. Ս.) աւետեացն լուսով ծայրէ ի ծայր զամենայն Հայաստանեայս և զԱղուանս և զՎիրս և որ շուրջ զնոքօք աշխարհք և իշխանութիւնք»[37]: Եվ իր այս առաքելաշեն գործունեությամբ նախանձախնդիր հայոց հայրապետը, ըստ Մ. Կաղանկատվացու և ապա նաև Կ. Գանձակեցու, շուտով Աղվանքի եպիսկոպոս է ձեռնադրում և լուսավորչական աշխատանքներ տանելու համար այնտեղ է ուղարկում իր և Տրդատ III-ի հետ Հռոմ քաղաքից եկած կրոնական մի սպասավորի: «Շնորհեցաւ նոցա (աղվանացիներին – Հ. Ս.),– գրում է Կաղանկատվացին,– այր մի երանելի ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն ի Հռովմ քաղաքէ, որ եկեալ էր ընդ Տրդատայ արքային»[38]: Նույնն է հաստատում նաև Կ. Գանձակեցին. «Եւ ձեռնադրէ սուրբն Գրիգոր զայր մի ի սպասաւորաց իւրոց եպիսկոպոս, որ եկեալ էր ընդ նմա ի Հռոմոց, և տայ զնա Ուռնայրի արքայի»[39]: Անհայտ է այս անձնավորության անունը: Հավանաբար սրան նկատի ունի սր. Գրիգորի «Վարքի» մեզ չհասած հայերեն բնագրի հունարեն խմբագրությունը[40], որը նշում է ոմն Թովմասի, որին Գրիգոր Լուսավորիչը ուղարկել է Աղվանք[41]: Այսպես թե այնպես, վաստ է, որ եկել էին նոր ժամանակներ և Աղվանքում վերսկսվել էին աշխույժ քարոզչական աշխատանքները: Սակայն պետք է ասել, որ Աղվանք ուղարկված հիշյալ հույն քարոզիչը անհրաժեշտ չափի ներգործություն չի ունեցել այնտեղ: Գուցե գեր է խաղացել ժողովրդին անհասկանալի նրա քարոզչության լեզուն՝ հունարենը:

---

36 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց. Երևան, 1983, էջ 468, §842:

37 Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի ասորւոց պատրիարքի. Յերուսաղեմ, 1870 էջ 596:

38 Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 20:

39 Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. Պատմութիւն Հայոց. Երևան, 1961, էջ 193 Ուռնայր արքայի հիշատակությունն այստեղ ժամանակավրեպ է: Նա Աղվանքում թագավորել և քրիստոնեությունը պաշտոնական կրոն է հռչակել IV դ. 70-ականների սկզբներին, որը այլ թեմայի նյութ է:

40 Այն հայտնաբերել ու հրատարակել է ֆրանսիացի հայագետ Ժ. Գարիտը (Ա. Տ ե ր - Ղ և ո ն գ յ ա ն. Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը. Երևան, 1968, էջ 14–15):

41 Այս աղբյուրի համաձայն Գրիգոր Լուսավորիչը Վրաստան է ուղարկել Իրենարքոս, Լազերի երկիր՝ Սոփրոնիոս անուններով քարոզիչների (G. G a r i t t e. Documents pour l' ctude du livre d' Agatange. Vaticano, 1946, p. 101, 102, 170. Հայ ժողովրդի պատմություն. հ. 2, Երևան, 1984, էջ 79: Ե. ք հ Ն. Պ ե տ ր ո ս յ ա ն. Հայ եկեղեցու պատմություն, մաս Ա. Հաղբատավանք, 1990, էջ 22):

Համենայն դեպս նրա գործունեության մասին աղբյուրները ոչինչ չեն հաղորդում, անհայտության մեջ թողնելով նաև նրա հետագա ճակատագիրը: Որ նա նկատելի հետք չի թողել Աղվանքում, երևում է նաև նրանից, որ նա այդպես էլ չի հիշատակվում Աղվանքի լուսավորիչ-հայրապետների ցանկում: Այստեղ սբ. Եղիշայից հետո, անմիջապես նշվում է Մանուկ Գրիգորիսը՝ հայոց կաթողիկոս Վրթանեսի որդին և Գրիգոր Լուսավորչի թոռը[42]:

Մանուկ Գրիգորիսը, մինչ Աղվանքում որպես քարոզիչ հանդես գալը, նույն առաքելությամբ դտնվում էր Փայտակարանում[43] և Աղվանք է ուղարկվում այս անգամ Վրթանես հայոց կաթողիկոսի (331-341թթ.) ու խոսրով III (330-338 թթ.) թագավորի օրհնությամբ, ընդ որում աղվանացիների խնդրանքով: «Խնդրեցին յԱղուանից Մանուկն Գրիգորիս ի կաթողիկոսութիւն իւրեանց,– գրում է Կաղանկատվացին[44]: «Խնդրեցին աղուանք ի Հայոց կաթողիկոս զՍուրբն Գրիգորիս»,– հաստատում է Մխիթար Գոշը[45]: Հավանաբար աչքի առաջ ունենալով հույն քարոզչի օրինակը, աղվանացիները գտնում են, որ անհրաժեշտ է ունենալ մի այնպիսի գործիչ, որը լինելով Գրիգոր Լուսավորչի սերնդից, մեծ ազդեցություն կունենար Մեծն Գրիգորի հռչակված անվան շնորհիվ, մարդիկ կտկնածեին և կվարվեին նրա հրահանգների համաձայն[46]:

Հույն քարոզչի ու Մանուկ Գրիգորիսի ավետարանչությամբ սկսվում է քրիստոնեության Աղվանք ներթափանցման նոր՝ երկրորդ փուլը: Ինչպես դժվար չէ նկատել, այս փուլում քրիստոնեությունն այստեղ (և հարևան այլ երկրներ) էր թափանցում Հայաստանից՝ ժամանակի առաջին դեմքերի՝ թագավորի և կաթողիկոսի նախաձեռնությամբ ու հովանավորությամբ:

Քրիստոնեության Աղվանք ներթափանցման երկրորդ փուլի ամենագործունյա քարոզիչը Մանուկ Գրիգորիսն էր, որը մեծ ու վճռական դեր կատարեց երկրում քրիստոնեության տարածման հարցում: Գալով Աղվանք, նա ծավալուն քարոզչական գործունեություն է տանում՝ շեներում և քաղաքներում եկեղեցիներ է կառուցում, քահանաներ ձեռնադրում, աշակերտներ պահում և ուսուցանում:

Այսպիսով, քրիստոնեությունն Աղվանք է ներթափանցել երկու փուլով և երկու ուղղություններով: Առաջին փուլը սկսվել է մ.թ. II դ. սկզբներին և տևել մինչև սբ. Եղիշայի նահատակությունը: Այս փուլի գլխավոր քարոզիչը Եղիշան էր և ի դեմս նրա, նոր կրոնը մեզ հետաքրքրող երկիր է

---

42 Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 342, 350:

43 Խ ո ր ե ն ա ց ի, էջ 259:

44 Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 14: Պատմիչն իր այս միտքը հայտնում է նաև մի այլ տեղում (էջ 350):

45 Ղ. Ա լ ի շ ա ն. Հայապատում, էջ 384:

46 Այսպիսի կարծիքը անհիմն չէ: Ըստ Խորենացու, նման նկատառումներով էին առաջնորդվել Փայտակարան քաղաքի վերակացուները, իրենց համար քարոզիչ ինդրելով Մանուկ Գրիգորիսին. «Եկեալ գործակալք կողմանցն արևելից Հիւսիոյ, վերակացուք հեռաւոր քաղաքին, որ կոչի Փայտակարան՝ ասեն ցարքայ»: Եթէ կամիցիս ուղղութեամբ վարել կողմանցն այնոցիկ ըստ այսմ հաւատոյ առաքեա նոցա եպիսկոպոս ի զաւակէ սրբոյն Գրիգորի, զի յոյժ փափագելով ինդրեն. և գիտեմք հաւաստի, թէ ի հռչակեալ անուանէն Գրիգորի ակնածեսցեն և ի նորին զավակէ, առնել զամենայն ըստ հրամանի» (Խ ո ր ե ն ա ց ի, էջ 259):

ներթափանցում Երուսաղեմից և տարածվում այս առաքյալի ու իր աշակերտների միջոցով: Երկրորդ փուլը սկիզբ է առել IV դ. առաջին տասնամյակներին ու շարունակվել մինչև նույն դարի 70-ական թվականները՝ մինչև Ուռնայր թագավորի կողմից քրիստոնեության պետական պաշտոնական կրոն հռչակելը: Այս անգամ քրիստոնեությունն Աղվանք մուտք էր գործում Հայաստանից՝ այստեղից ուղարկված քարոզիչների, մասնավորապես, Մանուկ Գրիգորիսի ջանքերով:

Սբ. Եղիշան և Մանուկ Գրիգորիսն էին Աղվանից եկեղեցու այն երկու հիմնասյուները, որոնք սկզբնավորում ու հաստատում են հավատը երկրում: Ճշմարիտ է պատմիչը, երբ արձանագրում է. «Զառաքելական հաւատն ... նախ ի սրբոյն Եղիշայէ հիմնադրեալ և ապա ի սրբոյն Գրիգորիսէ հաստատեալ»[47]:

ПУТИ И ВРЕМЯ ПРОНИКНОВЕНИЯ ХРИСТИАНСТВА В АЛБАНИЮ

ГЕНРИК СВАЗЯН

Р е з ю м е

Христианство проникло в Албанию в два периода. В первый период оно распространялось в стране святым Егиша и его учениками. Св. Егиша был первым просветителем Албании и основателем раннехристианских общин. В этот период в лице св. Егиша христианство проникло в Албанию пророками, вышедшими из Иерусалима. Изучение данных источников показывает, что пророческая деятельность св. Егиша в Албании попадает на начало II века. Отсюда следует, что проникновение христианства, как и основание раннехристианских общин в стране происходили не раньше чем во II веке. Этот период охватывает время между началом II века и мученической смертью св. Егиша. Второй период проникновения христианства в Албанию начинается с 30-х годов IV века и продолжается до 70-х годов того же века. Он завершился признанием христианства в Албании государственной религией. Анализ сообщений источников доказывает, что в этот период проникновение христианства в Албанию теснейшим образом связано с именами царей Армении Трдата III и его сына Хосрова III, а также католикосов Григория Просветителя и его сына Вртанеса. Именно они послали в Албанию и соседние с ней страны (в Грузию и страну Маскутов) проповедников для распространения и насаждения христианства. Этот факт не оставляет сомнений, что на этот раз христианство шло в Албанию из Армении. Св. Егиша и Манук Григорис являлись основоположниками албанской апостольской церкви.

---

47 Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 300:

WAYS AND THE TIME OF PENETRATING THE CHRISTIANITY INTO ALBANIA

HENRIK SVAZYAN

S u m m a r y

We know two periods of penetrating the Christianity into Albania. During the first period it was penetrated by St. Yeghisha and his pupils. Yeghisha was the first who enlightened Albania and the first founder of earlier Christian communities. During this period after St. Yeghisha the Christianity penetrated into Albania by prophets from Jerusalem. The learning of these sources shows that prophet work of St. Yeghisha was from the beginning of the 2nd century. It follows from this that penetrating the Christianity and foundation of the first communities in the country was at the beginning of the second century. This period embraces the time between the 2nd century and martyr death of St. Yeghisha. The second period of penetrating the Christianity into Albania begins from the 30s of the 4th century and continues till the 70s of the same century. It was finished by recognition of the Christianity as the state religion in Albania. The analysis of the sources of announcements proves that this period of penetrating the Christianity into Albania was connected closely with the names of Armenian kings Tiridat III and his son Khosrov III and also Catholicoses Gregory the Illuminator and his son Vrtanes. Just these men sent to Albania and neighbouring countries (to Georgia and country of Maskutes) preachers for spreading the Christianity. This fact doesn't leave doubt that on this occasion the Christianity came to Albania from Armenia. St. Yeghisha and Manuk Grigoris were the founders of Albanian Apostolic Church.